## 44. ԹԱՔԱՎԵՐԸ ՆԱՆ ՎԵԶԻՐԸ

*Ինըմ ա, չինըմ մին Թաքավեր։ Էտ Թաքավերը մին օր ո̈ւրա̈ն վեզիրին զարկըմ ա, ո̈ւրա̈ն Հըրևան րա̈գյին անա տասը վըռեխճար առնի։*

*Վեզիրը քյինըմ ա, առնըմ, Թա պերի, էտ բա̈դյը մին Թոխտ ա կյիրըմ, տամ էտ վեզիրին, վեր տանե տա Թաքավերին։*

*Թոխտին մաչին կյիրա̈ծ ա ինըմ. «Ծեր հրամմանավը տասսը վըռեխճար ա ըզարկած»։ Վեզիրը պերելիս, ճընապարին մին վըռեխ-ճար ա մորթըմ, ուտըմ։*

*Մընացածը պերըմ ա, տամ Թաքավերին, Թոխտըն էլ նըհետը։*

*Թաքավերը կարթըմ ա, տըեսնըմ տասը վըռեխճար ա կյիրած, ամմա վեզիրը իննըն ա պերալ։*

*Թաքավերը վեզիրին կանչըմ ա ո̈ւրա̈ն կոշտը, ասըմ.— Վե՛զիր, տու ըեդմա տասսը վըռեխճար ինիս պերած, իննըն ըս պերալ։*

*Վեզիրըն ասըմ ա.— Թաքավերը ապրած կըենա, դո̈ւզ ա, իննը վըռեխճար ըմ պերալ։*

*Թաքավերը կըզնըվըմ ա, ասըմ.— Ա՛յ մարթ, հունց Թա դո̈ւզ ա, տու ըեդմա տասսը վըռեխճար ինիս պերած, իննըն ըս պերալ։*

*Վեզիրըն ասըմ ա.— Դո̈ւզ ա, Թաքավերըն ապրած կենա։*

*Թաքավերը տըեսնըմ ա, վեր վեզիրը հըսկանըմ չի, կանչըմ ա տասսը մարթ, ամեն մին մարթի վըռեննա մին վըռեխճար ա կապըմ։ Թաքուհին էլ ա ինըմ էտ տասը մարթին մեչին։ Թաքուհին մընըմ ա առանց վըռեխճար։*

*Թաքավերըն ասըմ ա.— Ա՛յ մարթ, տըեսնըմ ը՞ս, վեր մին վըեխճար պըկասըմ ա, դե քյինի վըեխճարը պեր։*

*Վեզիրը ո̈ւրա̈ն հետի դինջ-դինջ, ասիս լհա̈ վեջան չի, ասըմ ա.*

*— Ատա, քու կընեգյըտ էլ, քու վըեխճարնիտ էլ։ Շո̄ւտ կյար, մինին վըեննան էլ ինքյը փըռնար, մընար վեչ առանց վըեխճար։*

*Իտի էլ թաքավերը կարից վեչ հըսկըցնի, վեր պերած պիտեր տասը վըեխճար, վեչ թա իննը։*